

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կենտրոն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կենտրոնն ստեղծվում, վերակազմակերպվում է, և դրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր) կողմից:

3. Իր գործունեության ընթացքում Կենտրոնը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Կենտրոնը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կենտրոնը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցորդ կամ պատասխանող:

5. Կենտրոնը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար, իսկ Հիմնադիրը պատասխանատվություն է կրում միայն մինչև Կենտրոնի պետական գրանցումը ծագած՝ նրա ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

6. Կենտրոնն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք և խորհրդանիշ: Կենտրոնը կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ:

7. Կենտրոնի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ “Реабилитационный центр правонарушителей” государственная некоммерческая организация,

ռուսերեն կրճատ՝ “ Реабилитационный центр правонарушителей ” ГНО,

անգլերեն լրիվ՝ “The offenders rehabilitation center” state non-commercial organization,

անգլերեն կրճատ՝ “The offenders rehabilitation center” NCSO:

8. Կենտրոնի գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Մովսես Խորենացու 162ա:

9. Կենտրոնն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվներ՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

10. Կենտրոնի բոլոր եկամուտներն ու ծախսերը նախատեսվում և օգտագործվում են տարեկան նախահաշվին համապատասխան:

## **II. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

11. Կենտրոնի գործունեության առարկան է՝

ա) իրավախախտում կատարած անձանց ուղղման, սոցիալական վերականգնման և վերահնտեգրման արդյունավետ և նպատակային ծրագրերի (այսուհետ՝ սոցիալական վերականգնողական ծրագրեր), այդ թվում՝ կրթական, մշակութային, մարզական, մանկավարժական, հոգեբանական ու սոցիալական աշխատանքի միասնական չափորոշիչների մշակումը և լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնելը,

բ) սոցիալական վերականգնողական ծրագրերի իրականացումը քրեակատարողական հիմնարկներում պահվող կամ ազատությունից զրկման հետ չկապված պատիժ

կրող կամ վերահսկողության տակ գտնվող, ինչպես նաև պատժից ազատված անձանց համար,

գ) իրավախախտում կատարած անչափահասների արտադպրոցական դաստիարակության կազմակերպման, իրավագիտակցության բարձրացման, պատժից ազատված անչափահասների սոցիալական վերաինտեգրման միջոցառումների կազմակերպումը,

դ) քրեական արդարադատության ոլորտում իրավախախտների հետ աշխատանքում հասարակական նախաձեռնությունների սատարումն ու խթանումը, դրանց պետական աջակցության ցուցաբերումը,

ե) սոցիալական վերականգնողական ծրագրերի իրականացման շրջանակում պետական և ոչ պետական մարմինների փոխգործակցության համալիր միջոցառումների իրականացումը, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ միջոցառումների, խորհրդատվության և համաժողովների կազմակերպումը,

զ) տեղեկատվական և վիճակագրական շտեմարանների ձևավորումը, վերլուծությունը և ուսումնասիրությունների իրականացումը,

է) տեղեկատվական-վերլուծական նյութերի և գրականության պատրաստումը:

12. Կենտրոնի նպատակներն են՝

ա) քրեական արդարադատության ոլորտում իրավախախտում կատարած անձանց ուղղումը,

բ) սոցիալական վերականգնումն ու վերաինտեգրումը,

գ) կրկնահանցագործությունների կանխումը,

դ) հասարակության անվտանգության մակարդակի բարձրացումը.

13. Կենտրոնը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն հանգստի ու զվարճությունների կազմակերպման, մշակույթի և սպորտի բնագավառներում՝ մատուցելով հետևյալ ծառայությունները՝

ա) պատանի հանդիսատեսի և մանկական թատրոնների ներկայացումների ցուցադրում,

բ) ցուցահանդեսների կազմակերպում և անցկացում,

գ) ինքնագործ նկարիչների ստեղծագործությունների և արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպում և անցկացում,

դ) զարդակիրառական արվեստի վարպետների ստեղծագործությունների և արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպում և անցկացում,

ե) սիրողական ակումբների և ստուդիաների անդամների ստեղծագործությունների և արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպում և անցկացում,

զ) ժողովրդական ստեղծագործության ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում և անցկացում,

է) հրատարակչական գործ,

ը) կրթական և վերականգնողական ծրագրերի իրականացում:

14. Կենտրոնի գործունեության ընթացքում առաջացած շահույթը (միջոցները) օգտագործվում է կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

### **III. ԿԵՆՏՐՈՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ**

15. Կենտրոնի սեփականությունը ձևավորվում է Կենտրոնի հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կենտրոնի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

16. Կենտրոնն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին, և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

17. Հիմնադիրը Կենտրոնին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ Կենտրոնի լուծարումից հետո մնացած գույքի:

18. Կենտրոնի սեփականության պահպանության հոգսը կրում է Կենտրոնը:

19. Կենտրոնի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

20. Հիմնադիրը կարող է Կենտրոնին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

21. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից Կենտրոնին ամրացված գույքը:

22. Կենտրոնն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման: Կենտրոնն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնելու վարձակալության: Կենտրոնին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն է:

23. Հիմնադրի կողմից գույքը Կենտրոնին ամրացնելը չի կարող հիմք հանդիսանալ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

24. Հիմնադրի կողմից Կենտրոնին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

#### **IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

25. Կենտրոնի կառավարումն իրականացնում է Հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

26. Կենտրոնի Հիմնադիրը՝

ա) հիմնադրում է Կենտրոնը,

բ) սահմանում է Կենտրոնի գործունեության առարկան և նպատակները, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները,

գ) վերակազմակերպում կամ լուծարում է Կենտրոնը,

դ) լուծում է օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր:

27. Լիազորված պետական մարմինը՝

ա) հաստատում է Կենտրոնի կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ,

բ) սահմանում է Կենտրոնի կառավարման համակարգը,

գ) հաստատում է Կենտրոնի՝ սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմը,

դ) նշանակում է Կենտրոնի լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը,

ե) կենտրոնի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

զ) իրականացնում է Կենտրոնի գործունեության նկատմամբ վերահսկողությունը,

է) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կենտրոնի գործադիր մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

ը) ստանում է Կենտրոնի գործունեության մասին հաշվետվություններ, քննարկում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

թ) վերահսկողություն է իրականացնում Կենտրոնի սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նոր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

ժ) հաստատում է Կենտրոնի տարեկան հաշվետվությունները և հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

ժա) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

28. Կենտրոնի տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն), որին աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում լիազորված պետական մարմինը, իրականացնում է Կենտրոնի ընթացիկ գործունեության ղեկավարումը:

29. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից:

30. Տնօրենի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, օրենքով նախատեսված դեպքերում:

31. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կենտրոնի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի և պետական լիազորված մարմնի որոշումներով ու Կենտրոնի կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) տալիս է Կենտրոնի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կենտրոնի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսական միջոցներ և կարգապահական տույժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ, այդ թվում՝ տարադրամային,

զ) կատարում է աշխատանքների բաշխում իր աշխատակիցների միջև,

է) սահմանում է Կենտրոնի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում մանկավարժական կադրերի մասնագիտական մակարդակի բարձրացման համար,

ժ) վերահսկում է Կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերի կատարումը,

ժա) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը,

ժբ) հաստատում է Կենտրոնի մասնաճյուղերի կանոնադրությունը,

ժգ) նշանակում է Կենտրոնի մասնաճյուղի ղեկավարին, նրան տալիս է համապատասխան լիազորագրեր,

ժդ) սահմանված կարգով հաշվետվություններ է ներկայացնում պետական կառավարման լիազորված մարմնին,

ժե) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Կենտրոնի կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

32. Տնօրենի բացակայության դեպքում նրա պարտականությունների ժամանակավոր կատարումը պետական լիզորված մարմինը՝ Տնօրենի առաջարկությամբ դնում է Կենտրոնի մեկ այլ աշխատողի վրա:

33. Կենտրոնի խորհրդակցական մարմինը Կենտրոնի բազմամասնագիտական խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

34. Խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Տնօրենը և աշխատողները: Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել ոլորտի այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, հրավիրված մասնագետներ:

35. Խորհրդի գործունեությունը սահմանվում է լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարի կողմից սահմանված կարգով:

36. Կենտրոնում գործավարությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

37. Կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության, նրա կանոնադրության պահանջների կատարման, կրթական ու ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

## **V. ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՎԱԿԵՐՊՈՒՄԸ**

38. Սոցիալական վերականգնողական ծրագրերը, այդ թվում կրթական, մշակութային, մարզական, մանկավարժական, հոգեբանական, սոցիալական և իրավական կազմակերպվում և իրականացվում են կենտրոնի կողմից մշակված ծրագրերով սահմանված չափորոշիչներին համապատասխան:

39. Կենտրոնի սոցիալական վերականգնողական ծրագրերը իրականացվում են՝ հիմնվելով մարդասիրության, մարդու իրավունքների և արժանապատվության հարգանքի, անձին անհատական մոտեցման, մասնագիտական իրավասության, գաղտնիության սկզբունքների վրա:



40. Կենտրոնում կազմակերպվող կրթական գործընթացը իրականացվում է արտադպրոցական կրթության չափորոշիչներին համապատասխան:

41. Կենտրոնի կրթական գործունեությունը կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական գործընթացի ժամանակացույցով և դասացուցակներով, Կենտրոնի կողմից մշակված ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի համաձայն, առկա ուսուցման ձևով:

42. Կրթական ծրագրերի առավել արդյունավետ յուրացման նպատակով ուսուցման առաջավոր ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությամբ ծրագրին մասնակից անձանց համար Կենտրոնը ստեղծում է ուսումնառության համար անհրաժեշտ պայմաններ:

43. Սոցիալական վերականգնողական ծրագրերի իրականացման ժամկետները սահմանվում են ինչպես Կենտրոնի, այնպես էլ Կանոնադրության 48-րդ կետում նշված հիմնարկների և մարմինների ներքին կանոնակարգերի և պայմանների առանձնահատկություններին համապատասխան:

44. Կենտրոնի սոցիալական վերականգնողական ծրագրերը կարող են կազմակերպվել ինչպես առկա, հեռահար, այնպես էլ առցանց ձևերով:

45. Սոցիալական վերականգնողական ծրագրերը կարող են իրականացվել նաև խմբային և անհատական ձևերով, ինչպես գործնական աշխատանքների, այնպես էլ խորհրդատվությունների տեսքով:

46. Կենտրոնի կողմից կազմակերպվող մշակութային ծրագրերը կարող են իրականացվել հետևյալ ձևերով՝ ճանաչողական էքսկուրսիաներ, համերգներ, ցուցահանդեսներ, ներկայացումներ և այլն:

47. Սոցիալական վերականգնողական ծրագրերի մասնակիցներին տրվում է համապատասխան վկայական:

48. Կենտրոնը սոցիալական վերականգնողական ծրագրերը իրականացնում է կենտրոնում: Փոխադարձ համաձայնությամբ Կենտրոնը սոցիալական վերականգնողական ծրագրերը կարող է իրականացնել քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում, ազատազրկման հետ չկապված պատիժներ իրականացնող, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված և վերահսկողության մեջ գտնվող անձանց նկատմամբ հսկողություն իրականացնող

մարմիններում, ինչպես նաև իրավախախտում կատարած անձանց հետ աշխատանքներ իրականացնող մարմիններում:

## **VI. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ**

49. Կենտրոնի աշխատողներն իրավունք ունեն՝

ա) ընտրելու և օգտագործելու սոցիալական վերականգնողական ծրագրերի իրականացման գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ մասնագիտական մեթոդիկաներ, ձեռնարկներ և նյութեր, գնահատման մեթոդներ.

բ) սահմանված կարգով օգտվելու Կենտրոնի տեղեկատվական ֆոնդերից, ուսումնական և այլ ծառայություններից, տեխնիկական հնարավորություններից.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու Կենտրոնի ղեկավարության հրամանները (կարգադրությունները): Աշխատողն ունի նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրով, հաստատության կանոնադրությամբ չարգելված այլ իրավունքներ:

50. Կենտրոնի աշխատողը պարտավոր է՝

ա) կատարել Կենտրոնի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները.

բ) բարեխղճորեն կատարել իր աշխատանքային պարտականությունները.

գ) ապահովել իր գործունեության պատշաճ մասնագիտական մակարդակը.

դ) Կենտրոնի աշխատողը կրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:

## **VII. ԿԵՆՏՐՈՆԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ**

51. Կենտրոնի շահառուներ կարող են հանդիսանալ իրավախախտում կատարած անձինք (վերջինիս ընտանիքի անդամները), այդ թվում նաև անչափահասները, մասնավորապես՝

ա) քրեակատարողական հիմնարկներում պահվող անձինք,

բ) ազատությունից զրկման հետ չկապված պատիժ կրող անձինք,

գ) վերահսկողության տակ գտնվող անձինք,

դ) պատժից ազատված անձինք:

52. Կենտրոնի կողմից իրականացվող սոցիալական վերականգնողական ծրագրերին կարող են մասնակից դառնալ նշված անձանց ընտանիքները:

53. Կենտրոնի շահառուն իրավունք ունի՝

ա) անվճար օգտվել Կենտրոնի գրադարանից և ռեսուրսներից,

բ) անվճար մասնակցել Կենտրոնի կողմից կազմակերպված սոցիալական վերականգնողական ծրագրերին:

54. Կենտրոնի շահառուն պարտավոր է՝

ա) կատարել Կենտրոնի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները,

բ) խնամքով վերաբերվել Կենտրոնի գույքին,

գ) հարգել աշխատակազմի և մյուս շահառուների իրավունքներն ու արժանապատվությունը,

դ) կատարել սոցիալական վերականգնողական ծրագրերի պահանջները:

### **VIII. ԿԵՆՏՐՈՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

55. Կենտրոնի հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

56. Կենտրոնը ֆինանսավորում է Հիմնադիրը: Կենտրոնի ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և լրացուցիչ աղբյուրներից:

57. Կենտրոնի լրացուցիչ ֆինանսական աղբյուրներն են՝

ա) բարեգործական, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,

բ) կենտրոնի կանոնադրական նպատակներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

58. Կենտրոնն իր միջոցների հաշվին աշխատողների աշխատավարձի նկատմամբ կարող է կիրառել հավելումներ:

59. Կենտրոնը ֆինանսական գործունեության մասին սահմանված կարգով ներկայացնում է հաշվետվություն լիազորված պետական մարմնին:

60. Կենտրոնը Հիմնադրի կողմից սահմանված կարգով հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

## **IX. ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

61. Կենտրոնը կարող է վերակազմակերպվել Հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

62. Կենտրոնը կարող է վերակազմակերպվել 100 տոկոսանոց պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի: Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

63. Կենտրոնի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

64. Կենտրոնը կարող է լուծարվել Հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կենտրոնը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

65. Կենտրոնը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

66. Կենտրոնի լուծարման դեպքում Կենտրոնի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: